



«ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ԱՐԾԻՎԸ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՍՏԱՆՈՒՄ»¹
ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆԸ

Ամենայն Հայոց Կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանն այն մարդկանցից էր, որոնց կյանքն ու գործունեությունը սերտորեն փոխկապակցված են ազգային հարցերին, անքակտելիորեն ձուլված են անձնական ապրումն ու հայրենասիրությունը: Ասվածի պերճախոս վկայությունը նրա՝ Հայոց Հայրիկ պատվանունն էր, որով օժտեց իր սիրելի զավակին ժողովուրդը: Բանասիրական գիտությունների դոկտոր Վարդան Դերիկյանի «Վասպուրականի արծիվը հայ գրականության անդաստանում» աշխատությունը Մկրտիչ Ա. Խրիմյանի գրական ժառանգությունը հենց այս ամբողջության մեջ է դիտում՝ միաժամանակ օրինակելի եւ որոնելի դարձնելով այսպիսի գործիչների կերպարը մեր օրերում:

Գրքի առաջաբանում աշխատության հեղինակը երկու նպատակ է կարեւորում՝ ա. «ցույց տալ, թե նախորդող դարերի եւ հատկապես ուշ միջնադարի գեղարվեստական մտածողությունն ու պատկերային համակարգն ինչպես են նորովի արտահայտվել Խրիմյանի ստեղծագործությունների մեջ՝ դրանք դարձնելով կապող օղակ հին եւ նոր շրջանների հայ եկեղեցական գրականության հետ» (էջ 12), բ. Խրիմյանի ստեղծագործությունները ներկայացնել ժամանակի ընթացքի մեջ եւ «ժանրային որոշակի համակարգմամբ»:

Գրքի 16 գլուխները ժամանակագրական հաջորդականությամբ ներկայացնում են Խրիմյան Հայրիկի ստեղծագործական ուղին: «Կյանքի առաջին շրջանը» գլուխը հետաքրքրասեր ընթերցողին մատուցում է բազում ուշագրավ փաստեր՝ սկսած «Խրիմյան» ազգանվան ծագումից (Ղրիմում կտավի արտահանմամբ զբաղվող նրա գերդաստանի՝ Վանի բար-

¹ Վ. ԴԵՐԻԿՅԱՆ, Վասպուրականի արծիվը հայ գրականության անդաստանում, Երեւան, Համազգային հայ կրթական եւ մշակութային միություն, 2021, 371 էջ: Աշխատությունից մեջբերումները կնշվեն տեղում՝ էջի հիշատակմամբ:

բառով «Կրթմցոց» հնչող Ղրիմեցոց անվան ձեւափոխումն էր. տե՛ս էջ 15) մինչեւ հայրենանվեր գործչի նախապատրաստումն իր առաքելությանը:

Հաջորդ երկու գլուխները՝ «Հայ նոր գրականության առաջին ուխտավորական պոեմը» եւ «Ավետյաց երկրի հրավիրակը», համապատասխանաբար վերլուծում են՝ «Հրավիրակ Արարատեան» (1850 թ.) եւ «Հրավիրակ երկրին Աւետեաց» (1851 թ.) ուխտավորական պոեմները, որոնք, ինչպէս նկատում է աշխատասիրության հեղինակը, համալրում են դասականապաշտ (կլասիցիստական) ուսուցողական (գիդակտիկ) երկերի շարքը: Աշխատության մեջ տրված է ուղեգրական ժանրի պատմությունը, բնորոշված են երկու «Հրավիրակ...»-ների ժանրային առանձնահատկությունները, եւ ամենայն մանրամասնությամբ ներկայացված են բովանդակությանը վերաբերող հարցերը:

«Հրավիրակ Արարատեան»-ը՝ որպէս երախայրիք, չափազանց կարեւոր էր իրիմյանի ողջ գործունեության համար, ուստի այս երկի ծավալուն վերլուծությունը բացահայտում է նրա ազգային, եկեղեցական, հայրենասիրական գաղափարների ողջ ծրագիրը: Աշխատության հեղինակը նկատում է, որ Մկրտիչ իրիմյանի առաջնային նպատակն ընթերցողի մեջ սեր արթնացնելն էր հայրենի բնության ու հիշատակների հանդեպ, ինչը նա իրականացնում է իր երկի չորս բաժիններում՝ նվագներում (էջ 38): Աշխատության մեջ հանգամանորեն վերլուծված են այդ հայրենաշունչ ստեղծագործության բոլոր դրվագները՝ հայկական տաղաչափության ընտրությունից մինչեւ հայ պատմագրական ավանդույթի կիրառումը, մինչեւ միջնադարյան հոգեմտավոր ընկալումների ամենանուրբ դրսեւորումները: Այդպիսի օրինաչափություններ են Հայոց պատմությունը համաշխարհային պատմության շրջագծում ներկայացնելը, Հայաստանը դրախտի հետ համադրելը, հայ ժողովրդի դժբախտությունների գլխավոր պատճառը գործված մեղքերով պայմանավորելը, փառավոր անցյալն ու անշքացած ներկան հակադրելը եւ այլն:

Պոեմի վերլուծության մեջ անտեսված չեն նաեւ այն բոլոր առնչությունները, որ երկն ունեւ հայ գրականության՝ իրենից առաջ եւ հետո եղած հեղինակների գրվածքներին՝ Մովսէս Խորենացուց մինչեւ սուրբ Ներսէս Շնորհալի, հայր Արսէն Բագրատունի, Խաչատուր Աբովյան, Րաֆֆի եւ Թումանյան, Սիամանթո... զուգահեռներ են տարված հայր Ղեւոնդ Ալիշանի ստեղծագործության հետ:

«Ավետյաց երկրի հրավիրակը» գլխում նրա մյուս ուխտավորական երկի՝ «Հրաւիրակ երկրին ավետեաց»-ի միջոցով վերլուծված են իրիմյան Հայրիկի կրոնագիտական հայացքները: Հայոց աշխարհի սրբավայրերից հետո Տերունական սրբավայրերում լինելը իրիմյան Հայրիկի պատգամն էր հայ մանուկներին: Հայրենասերի էության ամբողջացումը նա աստվածասիրությամբ էր պայմանավորում եւ Աստծու պատգամը նախ եւ առաջ Սուրբ Գրքի միջոցով էր փորձում իր ընթերցողին հասցնել: Ասվածի առաջնային արտահայտությունն Աստվածաշնչից քաղաբերված բնաբաններն էին: Սույն աշխատության մեջ հատուկ ուշադրություն է դարձված այդօրինակ բնաբաններին ընդհանրապես: Մասնավորապես այս պոեմի դեպքում համեմատված են երկու հրատարակությունների սուրբգրային բնաբանները, վերլուծված դրանց խորհրդանշային իմաստները:

Ինչպես «Հրաւիրակ Արարատեան»-ը, այնպես եւ «Հրաւիրակ երկրին ավետեաց»-ն ունեցել են բարերարներ: իրիմյան Հայրիկը եւ ԺԹ. դարի այլ հեղինակներ, դեռեւս միջնադարից եկող ավանդույթով, երախտագիտությամբ են դիմում իրենց երկերի բարերարներին, զրուցում նրանց հետ, ձոնում դրվատանքի խոսքեր: Առաջ ընկնելով նշենք, որ այդպես վերլուծված են գրքում քննված բոլոր ստեղծագործությունները: Աշխատությունը ոչ միայն անդրադառնում է այն բարերարներին, որոնք նպաստել են իրիմյանի այս կամ այն երկի ստեղծմանը, այլ նաեւ լրացուցիչ տեղեկություններով առավել ամբողջական է դարձնում ժամանակի մշակութային պատկերը:

Աշխատության մեջ նկատված եւ վերլուծված են երկու «Հրաւիրակ...»-ների մշտապես միմյանց հետ զուգահեռի մեջ լինելը, երկու բնագրերի սերտ կապը: Համեմատելով դիպաշարերը՝ Վ. Դեւրիկյանը նկատում է, որ ի տարբերություն «Հրաւիրակ Արարատեան»-ի, որն ավելի շատ տեղագրական երթուղու ընթացք ուներ, «Հրաւիրակ երկրին ավետեաց»-ում «սյուժեն զարգանում է ավետարանական պատումի ընթացքով, որն իր հերթին իրիմյանը աշխատում է ներկայացնել ուխտավորական ուղեգրության շրջանակում» (էջ 134—135): Գրականագետն ընդգծում է իրիմյան Հայրիկի՝ Տերունական սրբավայրերը որպես ականատես պատկերելու առավելությունը եւ այն ջերմեռանդությունը, որով նա ծանոթագրել է իր երկի այդպիսի հատվածները (էջ 135):

Աշխատության հեղինակն իրավացիորեն նկատում է, որ խրիմյան Հայրիկի այս գործը մի հարուստ շտեմարան է հայ միջնադարյան մատենագրության, ինչպես նաեւ քրիստոնեական վարդապետության բացահայտման առումով, քանի որ ոչ միայն չափածո ներկայացվում են ավետարանական շատ դրվագներ, այլ նաեւ տրվում են այդ հատվածների՝ միջնադարյան գրական ավանդույթից բխող մեկնությունները: Կան նաեւ գուտ խրիմյանական մեկնություններ:

Մեջբերենք մի հատված, որի առաջին երեք կետերը միջնադարյան երկը մեկնաբանելու ուղեցույց կարող են դառնալ. «խրիմյանի այս Հրավիրակը ունի գրական չորս շերտ, առաջին՝ Ավետարանը, երկրորդ՝ միջնադարյան մեկնությունները, երրորդ՝ Հայոց եկեղեցու ծիսական ավանդույթը, եւ չորրորդ՝ խրիմյանի հոգեւոր մտածումները» (էջ 144): Վ. Դեւրիկյանը նկատում է, որ Մկրտիչ խրիմյանը՝ որպես ուխտավոր ճանապարհորդ, եկեղեցիների ճարտարապետական հորինվածքների հանդեպ իր հիացմունքը հայտնելուց զատ, նաեւ այդ վայրերի հետ կապված բազում ավանդություններ է հիշատակում (էջ 154): Այդպիսի մի հիշատակություն է Հակոբոս առաքյալի եւ Հակոբոս Տյառնեղբոր նահատակությունների պատմությունը, որն այս գրքում վերլուծվում է համակողմանիորեն՝ իր բազում ճյուղավորումներով եւ այլ երկերի հետ ունեցած աղերսներով հանդերձ (էջ 154–159): Նույն ծավալով եւ համակողմանիությամբ է ներկայացվում պոեմը եզրափակող ուխտավորական վերջին կայանի՝ Գեթսեմանիի վանք՝ Տիրամոր գերեզմանին այցելությունը: Սուրբ Գրքից, եկեղեցական ավանդությունից, միջնադարյան հայ մատենագրությունից քաղված փաստերի համագրմամբ է մեկնաբանվում խրիմյան Հայրիկի երկի այս հատվածը:

Երկու հրատարակությունների կառուցվածքի, բովանդակության եւ անգամ ծանոթագրությունների համեմատությունը Վ. Դեւրիկյանին հնարավորություն է տալիս խրիմյան Հայրիկի երկը գնահատել նաեւ Սուրբ երկրի համաքրիստոնեական սրբավայրերի պահպանության առումով: Այդպիսին էր Սրբոց Հակոբյանց վանքը, որին, ինչպես նկատված է աշխատության էջերում, Ավետյաց երկրի հրավիրակի երկրորդ հրատարակության մեջ արդեն յոթանասունամյա բարձրաստիճան հոգեւորականն առավել մեծ ջերմեռանդությամբ է վերաբերվում (էջ 166–167):

«Վասպուրականի արծվի վարագյան շրջանը եւ «Սասնա ծռերի» երկրորդ հիշատակությունը» գլուխը «Արծուի Վասպուրական» (1855 թ.) թեր-

թի լույսընծայման եւ Խրիմյան Հայրիկի հրապարակախոսական գործունեության պատմությունն է: Այն մեծապես ցույց է տալիս նաեւ Խրիմյանի կրթած հայրենանվեր նոր սերնդի գործունեությունը: Ինչպես նկատում է սույն գրքի հեղինակը, այստեղ Արարատյան հրավիրակին փոխարինած Հրավիրակ Արծիւն է մանկանց տանում դեպ հայրենիքի խորքերը նույն երթուղով՝ շարունակելով հայրենաճանաչ անձինք կրթելու՝ պոեմի գործառույթը: Մեջբերենք մի կարեւոր դիտարկում. «Արծուի Վասպուրական»-ի համարներում իրար սերտորեն միահյուսված են ազգայինը եւ կրոնականը, ինչը բնորոշ էր Խրիմյանի գործունեությանը եւ գրական ժառանգությանը, որում ազգային թեմաներով ստեղծագործություններին հատուկ էր նաեւ կրոնական ջերմ ոգին եւ հայրենաշեն եկեղեցականներին ուղղված դրվատանքը, իսկ կրոնական բնույթի գործերում արտահայտվում էր հավատի միջոցով ազգային արժեքները եւ շափանիշները անեղծ պահելու ձգտումը» (էջ 173–174):

Այս գլխում մանրամասնորեն վերլուծված են «Արծուի Վասպուրական»-ի համարները, քննարկված են կառուցվածքի եւ բովանդակության հարցեր: Թերթի ամենաեռանդուն թղթակիցներից մեկը Գարեգին Սրվանձտյանցն էր, որը, տոգորված սիրելի ուսուցչի՝ Մկրտիչ Խրիմյանի գաղափարներով, նրա գործի հավատարիմ շարունակողն էր: Այս առումով ուսումնասիրության հեղինակը մի հետաքրքիր փաստ է ներկայացնում «Արծուի Վասպուրական»-ի 1858 թ. Ժ. համարում տպագրած «Վանտոսպ-Ակուփի» հոդվածի վերաբերյալ, որտեղ երկրորդ հիշատակությունն ենք գտնում հայ ազգային էպոսի մասին: Ենթադրությունն այն է, որ այդ հոդվածը հենց Գարեգինն էր. (այն ժամանակ դեռ վարդապետ) Սրվանձտյանցի գրչին է պատկանում (էջ 193):

«Արծուի Վասպուրական»-ի համակողմանի վերլուծությամբ Խրիմյան Հայրիկը բացահայտվում է նաեւ որպես հայ հեղափոխական եւ ազատագրական պայքարի նախակարապետ, որի գործունեությունը մեծ ազդեցություն է թողել հայ հասարակական մտքի պատմության վրա:

«Երկնային արքայության մարգարիտը» (1866 թ.) Լերան քարոզի (Մատթ. Ե.—է.) մեկնությունն է: Ի նկատ առնելով մինչեւ իրեն եղած հայրաբանական գրականությունը, մասնավորապես Ս. Հովհան Ոսկեբերանի, Ս. Ներսես Շնորհալու, Հովհաննես Երզնկացու, Ս. Գրիգոր Տաթևացու գրվածքները, Խրիմյանը կառուցում է իր վերլուծությունը՝ տող առ տող ընթերցողին մատչելի դարձնելով աստվածային խոսքի էությունը,

սույն աշխատության հեղինակի դիպուկ բնորոշմամբ՝ ստեղծում Լերան քարոզի մեկնությունն արդի մարդու համար (էջ 218):

Աշխատության «Քրիստոնեական վարդապետության ժողովրդային պարզ անդրադարձը» գլուխը կրկին դիտարկում է ավետարանական խոսքը ժողովրդին հասցնելու, մարդկանց համար այն պարզ ու հասկանալի դարձնելու՝ խրիմյանի ձգտումը: Այդ նպատակով է գրված «Յիսուսի վերջին շաբաթ եւ խաչի ճառ» (1876 թ.) երկը: Իրավացիորեն է նկատված, որ այստեղ կրոնական նյութի շուրջ խորհրդածություններին միահյուսված է անձնական ապրումը, իսկապես հոգեերգված է, որով հայրենասեր գործիչն առաջինն ինքն էր իրականացնում իր հորդորը՝ գրելու ժողովրդի հոգու հետ խոսող, նրա կոտրած սիրտը ապաքինող երկեր, ինչպիսին իր փոքրիկ խաչի ճառն էր, որն իր իսկ բնորոշմամբ՝ «ամբողջ սերունդ մը մխիթարեց եւ զօրացուց» (էջ 229):

Խրիմյան Հայրիկի բազմաշերտ գործունեությունը լավագույնս լուսաբանում է «Դրախտավայր երկրի դրախտի ընտանիքը» գլուխը, որը ոչ միայն Հայոց Հայրիկի գրական կամ կրոնագիտական հմտություններն է բացահայտում, այլ նաեւ իր ապրած հանրության, իր հովված ժողովրդի կյանքի իրապաշտական ընկալումը: Նա լավատեղյակ էր հասարակության արատներին, լավ ու վատ կողմերին եւ իր «Դրախտի ընտանիք» երկասիրության մեջ այդ ամենը քննում է իր երկի 16 գլուխներում, խորհուրդներ է տալիս իր ընթերցողին: Այս ամենը վերլուծաբար ներկայացված է սույն աշխատանքում:

«Ժամանակի անանց խորհուրդը» գլուխն անդրառնում է խրիմյան Հայրիկի քաղաքական հայացքներին, այն ակնկալիքներին, որ նա ուներ Օսմանյան պետության սահմանադրությունից, եւ այդ առիթով 1876 թ. տպագրել էր «Ժամանակ եւ խորհուրդ իւր» ստեղծագործությունը: Երկի իմաստասիրական բնույթը հնարավորություն է տվել այն համեմատելու հայր Ղեւոնդ Ալիշանի «Ընդ եղեւնեաւ. Յամայութեան բացավայրի խորհրդածութիւն» ստեղծագործության հետ: Եզրակացությունն այն է, որ ի տարբերություն հայր Ալիշանի կրոնափիլիսոփայական եւ համամարդկային ուղղվածության՝ խրիմյանի մտատանջության առարկան առավելապես ազգայինն էր, մասնավորապես արեւմտահայության վիճակն Օսմանյան պետության մեջ (էջ 247):

Այս նույն մտահոգություններից եւ սահմանադրությունից ապրած հիասթափությունից են ծնվում նաեւ «Վանգոյժ. Կուժ մի ջուր իւր աչրած

Հայրենեաց վերայ կը սրսկէ Խրիմեան Հայրիկ» եւ «Հայգոյժ. Աշխարանք Հայոց աշխարհին» երկերը, որոնք համապատասխանաբար վերլուծված են «Սահմանադրութեան գոհը. հայ բնաշխարհի գույժը» եւ «Երկաթյա շերեփի ճանապարհին» գլուխներում: Երկուսն էլ ժամանակի քաղաքական դեպքերի ազդեցութեան տակ գրված երկեր են եւ վերլուծվում են պատմական իրադարձությունների համապատկերում. 1876 թ. Վանի ողբերգական հրդեհը, որը թուրքական իշխանություններն էին կազմակերպել հայության տնտեսական ուժը նվազեցնելու համար, 1877 թ. սկսված ռուս-թուրքական պատերազմը: Երկու երկերում էլ աշխատութեան հեղինակն ընդգծում է պայքարի կոչը, «երկաթե շերեփի» հասունացող պահանջը, որ Խրիմյանն ավելի ու ավելի համառ ուղղում էր իր ընթերցողին: Կարելու է նաեւ մշտապես տարվող զուգահեռները հայ միջնադարյան երկերի հետ, գրական օրինաչափությունների վերհանումը:

«Հին Արեւելքի խրատի նորօրյա անդրադարձը» գլխում վերլուծված է «Սիրաք եւ Սամուէլ. Բարի հօր կրթական դասեր» գործը, որը, ըստ ռուսմանասիրության հեղինակի, «Դրախտի ընտանիքի» շարունակությունն է՝ «նույն բարոյաբանակ հարցադրումներով» եւ եթե «առաջինն ուղղված էր հայ ընտանիքին, ապա երկրորդը՝ հայ հասարակությանը» (էջ 264): Արեւելքան առակներով համեմծված այս երկն իր տրամաբանական շարունակությունն է գտնում «Պապիկ եւ թոռնիկ» ստեղծագործության մեջ՝ հորից որդուն խրատանին փոխարկելով պապից թոռանն ուղղված խրատներով, իսկ հետո իրեն գտնում ռուսոցողական մեկ այլ ձեւի մեջ՝ «Վասպուրականի արծվի հրեղեն քարոզներում», ինչպես եւ վերնագրված է գրքի հաջորդ գլուխը (տե՛ս էջ 277—286):

«Խրիմյան Հայրիկի բանաստեղծական աշխարհը. վերջալույսի արծվաշունչ վերջին նվագները» գլուխը կրկին Մկրտիչ Խրիմյանի բանաստեղծական քանքարին է անդրադառնում: Նշվում է, որ իր երկու պոեմներից՝ «Հրաւիրակ Արարատեան»-ից եւ «Հրաւիրակ երկրին Ավետեաց»-ից հետո Խրիմյան Հայրիկը, որոշ բացառություններով հանդերձ, գրեթե կես դար չդիմեց չափածոյին: Բայց ահա 1900-ականներին նա կրկին գրում է հանգերով: Իր վերլուծություններում Վ. Դեւրիկյանը տալիս է այդ գործերի ժանրային սահմանումը: Ըստ այդմ՝ «հիշյալ ստեղծագործությունները միջանկյալ տեղ են գրավում բանաստեղծությունների եւ պոեմների միջեւ, որպես ձեւավորված սյուժե ունեցող եւ հեղինակի զգացմունքների արտահայտությունը եղող ստեղծագործություններ» (էջ 290):

Վերլուծված է նաեւ ժամանակի գրական քննադատության վերաբերմունքը իրիմյան Հայրիկի բանաստեղծական վերջին արտահայտությունների հանդեպ: Այդ վերաբերմունքի անարդար, ոչ արժանվույն լինելը Վ. Դերիկյանը պայմանավորում է երկու գործոնով՝ իրիմյան Հայրիկի՝ «որպես համահայկական մեծության տիրական ներկայությամբ», ինչը ստվերում էր թողնում նրա վերջին շրջանի ստեղծագործություններ: Մյուս գործոնն այն էր, որ «19-րդ դարավերջին, առավել եւս 20-րդ դարասկզբին, երբ գրական ասպարեզ էին իջել արեւմտահայ ու արեւելահայ գրականության դասական մեծություններ, իրիմյանի նոր բանաստեղծությունները դուրս էին ժամանակի գրական շավղից եւ կարող էին դիտվել գրական ժամանակավրեպություն (անախրոնիզմ)» (էջ 290):

Եւ այդուհանդերձ՝ «Վերջալոյսի ձայներ» (Կահիրե, 1901 թ.) երկի վերլուծությամբ ցույց են տրվում այն հետաքրքիրն ու յուրահատուկը, որոնք նա հավելում էր հայ գրականության իմաստների բազմազանությանը: «Ողբացեալ զինուորի յիշատակին», «Ողբացեալ Զանշեի յիշատակին», «Իսահակի զենումն», «Դիւցազն Կարինէի յիշատակին», «Բեթլէհէմի ծաղիկ», «Իմ ուխտ Թաղէի վանուց» ստեղծագործությունների վերլուծություններն այդպիսի օրինակներ են: Առանձին ուշադրություն է դարձված եւս երեք բանաստեղծության, որոնցից առաջին երկուսը նվիրված են Վարդանանց, իսկ վերջինը՝ Ղեւոնդյանց նահատակներին:

Իրիմյանի մեկ այլ չափածո ստեղծագործություն՝ «Թագաւորաց ժողովը» (1900 թ.) վերլուծված է «Աշխարհի հզորները Առաջին աշխարհամարտից առաջ» գլխում: Հետաքրքիր է Վ. Դերիկյանի այն գնահատականը, ըստ որի՝ բանաստեղծության համար ընտրված երազի իրականությունը, որն ուներ նախազգուշացնող, կանխագուշակող բովանդակություն առ Եւրոպան եւ զարմանալի մանրամասնությամբ կատարվեց Առաջին աշխարհամարտի տարիներին, ռուսերեն ու եւրոպական լեզուներով թարգմանվելու (մինչ այժմ կա միայն անգլերեն տարբերակը) եւ հանրայնացվելու դեպքում միջազգային մեծ արձագանք կարող էր ունենալ (տե՛ս էջ 317): Բանաստեղծության մանրագնին վերլուծությունը երեւան է բերում նրա ոչ միայն գրապատմական, այլ նաեւ արդիական շեշտերը, Անգլիայի, Ավստրիայի, Գերմանիայի, Բելգիայի, Ֆրանսիայի, Ռուսաստանի, Չինաստանի, Թուրքիայի վարած քաղաքականությունը եւ Հայաստանի վիճակն այդ օգտապաշտ երկրների հյուսած քաղաքական սարդոստայնում:

Ուսումնասիրության վերջին երկու գլուխների վերնագրերն իսկ՝ «Վերջալույսի վերջին ցուքերը» եւ «Պատգամ կտակը Հայոց Հայրիկի», հուշում են դրանց ամփոփիչ լինելը՝ Խրիմյան Հայրիկի ողջ գրական ժառանգությունն ի մի բերելու առումով:

1901 թ. «Արարատ»-ի հմր. Ե.—Զ.-ում Խրիմյան Հայրիկը տպագրում է «Սանահինի վանուց ճնճղուկ» փոքրիկ պոեմանման ստեղծագործությունը: Սանահինի վանական խցի տանիքում բույն դրած ճնճղուկի եւ Հայրիկի միջեւ տեղի ունեցած զրույցն է ընկած ստեղծագործության հիմքում, որը հնարավորություն է տալիս զուգահեռներ տանել նմանատիպ երկերի, նախ եւ առաջ Հովհաննես Սարկավագ Իմաստասերի «Բան առ ձագն, որ ... կոչի Սարիկ»-ի հետ: Ըստ Վ. Դեւրիկյանի բնորոշման՝ այս ստեղծագործությամբ Մկրտիչ Խրիմյանը «կատարում է իր կյանքի հավատամքը եղող այն եզրահանգումը, որ հայը պետք է ապրի իր հայրենատուր հողի վրա» (էջ 327):

Նույն գլխում վերլուծված է նաեւ Ատոմյանց նահատակությանը նվիրված չափածո ստեղծագործությունը՝ «Ի յիշատակ անձնատուր նահատակութեան Ատոմեանց զօրավարաց» (տպագրվել է 1902 թ. «Արարատ»-ում): Կրկին երկը դիտարկված է համեմատության մեջ, զուգահեռներ են տարված նույն թեմայով եղած վկայաբանությունների հետ, սակայն առանձնացված է Խրիմյանի ստեղծագործության ընդգծված ազգային երանգը (տես էջ 334):

«Ողբացող Խորենացին ի յԱշտիշատ եւ յՕշական» պոեմը, որը լույս է տեսել 1901 թ. նախ «Արարատ» ամսագրում, իսկ մեկ տարի անց Վաղարշապատում՝ առանձին գրքով, Մկրտիչ Խրիմյանի եւս մեկ անդրադարձն է Մովսես Խորենացուն եւ նրա «Ողբ»-ին: Զուգահեռներ են տարվում հայր Ղեւոնդ Ալիշանի, Րաֆֆու, Սիամանթոյի ստեղծագործությունների, հենց իր՝ Խրիմյանի այլ գործերի, մասնավորապես «Պապիկ եւ թոռնիկ»-ի միջեւ: Վերլուծության մեջ ընդգծված է այն հարազատությունը, որ կար երկի հեղինակի՝ Մկրտիչ Խրիմյանի եւ «Խորենյան Ծերի» կերպարների միջեւ, ինչպես նաեւ այն գործովն ու հոգատարությունը, որով պոեմում ցույց է տրված հայ գեղջուկի կենցաղը, հայ գյուղի առօրյան: Պոեմում Խորենցու կենսագրությանը վերաբերող բազում դրվագներ՝ սկսած նրա կրթությունից մինչեւ ջրաղացպան դառնալն ու թափառիկ կյանքով ապրելը, իրենց մանրակրկիտ վերլուծությամբ բազում հետաքրքիր փաստեր են ի հայտ բերում՝ ուշադրության ծիրում պահելով հայ միջնադարյան գրականության մի հսկա տիրույթ:

Գրքում ցույց է տրված, որ հայրենի հողին կառչած լինելու, «Հայրենիքն ու Ընտանիքը երկրային կյանքի անդավաճան երկու սրբություններ» համարելու՝ իրիմյան Հայրիկի գաղափարներն իրենց արտահայտությունն են գտել «Պապիկ եւ թոռնիկ»-ում (էջ 368): Վ. Դեւրիկյանը նկատում է նաեւ, որ «Պապիկ եւ թոռնիկ»-ը հայ գյուղաշխարհի դարավոր կենսափորձն է փոխանցում (էջ 353): Այս ամենով հանդերձ՝ այն «հայ գյուղաշխարհի կյանքի սովորությունների ու նկարագրությունների ազգագրական հավաքական մի շտեմարան է, ուր ազգագրությունը ոչ թե իջեցված է կենցաղագրության մակարդակին, այլ բարձացված է ազգային կենսափոխոթայության աստիճանին» (էջ 356):

Այսպիսով՝ բովանդակության մանրամասն վերլուծությամբ սույն ուսումնասիրության հեղինակը փորձում է լավագույնս բացահայտել Մկրտիչ իրիմյանի հայրենասեր հոգու եւ մտքի յուրաքանչյուր նրբերանգ՝ միաժամանակ այսօրվա ընթերցողին նույնպես փորձելով հասանելի դարձնել այն ողջ մշակութային տեղեկույթը, որ պարունակում էին իրիմյանի երկերը եւ ի մասնավորի՝ այս մեկը, որի կենսասիրական ապրումը փոխանցելը հենց հող հայրենին պահել-պահպանելու եւ շենացնելու՝ Հայրիկի գլխավոր պատգամն էր: Եւ եթե յուրաքանչյուր գիրք եւ ուսումնասիրություն իրենց առաքելությունն ունեն, ապա Վ. Դեւրիկյանի «Վասպուրականի արծիվը հայ գրականության անդաստանում» ուսումնասիրությունը իրիմյան Հայրիկի՝ բարեպաշտ եւ հայրենանվեր մարդուն ուղղված պատգամը փոխանցելով լավագույնս է իրականացնում իր առաքելությունը:

ԼՈՒՍԻՆԵ ՎԱՐԴԱՆՅԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու, ԳԱԱ ԳԻ

